ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՖԹ-ՍԱԲԿ-Դ-10/2025

Ք. Երևան 20.10.2025թ.

«Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ Պրինցիպալ, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Բաղյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ՖԹ-Դեղատուն» ՍՊԸ-ն, այսուհետ՝ Գործակալ, ի դեմս ընկերության տնօրեն Լ. Սիմոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (միասին հիշատակվելու դեպքում՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Գործակալը պարտավորվում է Պրինցիպալի անունից և նրա հաշվին կատարել իրավաբանական գործողություններ, մասնավորապես՝

1.1.1. Պրինցիպալի և ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ ԲԿ ՓԲԸ միջև ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/5 գնման ընթացակարգի շրջանակներում կնքվելիք գնման պայմանագրի շրջանակներում Գործակալի ք. Երևան, Մարգարյան 6/2 հասցեում գտնվող դեղատան միջոցով (դեղատնային գործունեության իրականացման լիցենզիան կցվում է) Պրինցիպալի անունից սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ում նշված Պրինցիպալի կողմից տրամադրվող դեղի մանրածախ իրացում (բաց թողնում) սպառողներին՝ 01.01.2026թ.-ից մինչև 31.12.2026թ.-ն ներառյալ:

1.1.2. Իրացված (բաց թողնված) դեղի քանակը չի կարող գերազանցել Հավելված 1-ում նշված քանակից, իսկ դեղատոմսում նշված դեղը պետք է համապատասխանի Հավելված 1-ում նշվածին:

1.1.3. Գործակալը երաշխավորում է, որ Գործակալի սույն պայմանագրում նշված դեղատունը միացված է «Արմեդ» էլեկտրոնային առողջապահության համակարգին, Գործակալն ունի գրանցված ադմինիստրատոր, որպեսզի դեղը էլեկտրոնային դեղատոմսով դուրս գրելուց հետո կարողանա սպասարկել հաճախորդներին: Դեղատանը դեղատոմսերը պահպանվում են ՀՀ կառավարության 15.08.2019թ. N1080-Ն որոշմամբ սահմանված կարգով:

1.2. Գործակալի կողմից կնքված դեղերի մանրածախ իրացման (բաց թողնման) գործարքներից իրավունքներ և պարտականություններ են ծագում Պրինցիպալի համար:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. <u>Գործակալը պարտավոր է՝</u>

2.1.1. իրեն տրված հանձնարարությունը կատարել անձամբ,

2.1.2. Պրինցիպալի պահանջով նրան հաղորդել հանձնարարության կատարման ընթացքի մասին բոլոր տեղեկությոըւնները,

2.1.3. ի կատարումն հանձնարարության՝ անհապաղ Պրինցիպալին հանձնել գործարքներից ստացվածը՝ համապատասխան փաստաթղթով,

2.1.4. հանձնարարությունը կատարելուց կամ մինչև դրա կատարումը պայմանագիրը դադարելուց հետո, Պրինցիպալին անհապաղ վերադարձնել բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ լիազորագրերը, և ներկայացնել հաշվետվություն՝ մատուցված ծառայության վերաբերյալ: Հաշվետվությանը կցվում են Գործակալի ծախսերը հաստատող այն փաստաթղթերը, որոնք կապված են սույն պայմանագրից բխող հանձնարարության կատարման հետ:

2.1.5. Գործակալը պարտավոր է իրեն տրված հանձնարարությունը կատարել Պրինցիպալի ցուցումներին համապատասխան:

2.2. Պրինցիպալը պարտավոր է`

2.2.1. անհրաժեշտության դեպքում Գործակալին տալ սույն պայմանագրով նախատեսված գործողությունների կատարման լիազորագիր` Գործակալի կողմից սույն պայմանագրով նախատեսված իր պարտականությունների կատարման համար,

2.2.2. հատուցել Գործակալի կրած ծախսերը, որոնք դուրս չեն փոխհամաձայնեցված պայմաններից,

2.2.3. հանձնարարությունը կատարելու համար Գործակալին ապահովել անհրաժեշտ միջոցներով,

2.2.4. Գործակալից անհապաղ ընդունել պայմանագրին համապատասխան կատարվածը,

2.2.5. սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով վարձատրել Գործակալին:

3. Գործակալի վարձատրությունը

3.1. Կատարված հանձնարարության համար Պրինցիպալը Գործակալին վարձատրում է սույն պայմանագրի շրջանակներում` ըստ դեղի փաստացի կատարված մանրածախ իրացման (բաց թողնման) քանակների: Վարձատրության չափը սահմանվում է ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/5 գնման ընթացակարգի շրջանակներում կնքվելիք պայմանագրի ստորագրումից հետո և գրավոր հաստատվում կողմերի միջև կազմվող հավելվածի միջոցով:

3.2. Գործակալի կրած ծախսերը, դրանք հաստատող փաստաթղթերի հիման վրա, Պրինցիպալը հատուցում է վարձատրության գումարը վճարելու հետ միաժամանակ:

3.3. Եթե սույն պայմանագիրը դադարել է մինչև հանձնարարությունն ամբողջությամբ կատարելը, Պրինցիպալը պարտավոր է հատուցել հանձնարարությունը կատարելու հետ կապված Գործակալի կրած ծախսերը և վարձատրել կատարած աշխատանքին համաչափ:

4. Պայմանագրի գործունեության ժամկետը և դադարելու կարգը

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի սույն պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունների լրիվ կատարումը:

4.2. Սույն պայմանագիրը ենթակա է դադարեցման`

ա) Պրինցիպալի կողմից հանձնարարությունը վերացնելու դեպքում,

բ) Գործակալի հրաժարվելու դեպքում,

գ) օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով:

4.3. Սույն պայմանագրից հրաժարվելու դեպքում կողմը պետք է մյուս կողմին տեղեկացնի պայմանագիրը դադարեցնելու մասին ոչ ուշ, քան 30 (երեսուն) օր առաջ:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին

կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական կամ արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտականությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Այլ պայմաններ

6. 1 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն, երկու իրավահավասար օրինակից, ամեն Կողմին տրվում է մեկական օրինակ:

6.2. Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները վավեր են, եթե կազմվել են գրավոր և պատշաճ հաստատվել են կողմերի կողմից:

6.3. Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

6.4. Պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են երկկողմ բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7. Կողմերի վավերապայմանները

| Պրինցիպալ | Գործակալ |
|---|---|
| «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ<br>Գործունեության հասցե՝ ք. Երևան, Սիլիկյան թաղամաս, 2-րդ փ. 25/1<br>ՀՎՀՀ՝ 00043772<br>Հ/Հ 1570076313590100<br><br>Տնօրեն՝ Ալեքսանդր Բաղյան | «ՖԹ-Դեղատուն» ՍՊԸ<br>Գործունեության հասցե՝ ք. Երևան, Մարգարյան 6/2<br>ՀՎՀՀ՝ 00210423<br>Հ/Հ 11817074739800<br><br>Տնօրեն՝ Լաուրա Սիմոնյան |

Հավելված 1

ՖԹ-ՍԱԲԿ-Դ-10/2025 առ 20.10.2025թ.

գործակալության պայմանագրի

ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/5 գնման ընթացակարգի շրջանակներում կնքվելիք գնման պայմանագրի շրջանակներում մանրածախ իրացման (բաց թողնման) ենթակական դեղերի ցանկ

| Չափաբաժնի համար | Չափաբաժնի անվանում | Առևտրային անվանում | Արտադրող | Տեխնիկական բնութագիր | Ընթացակարգով նախատեսված քանակ / հատ |
|---|---|---|---|---|---|
| 57 | դիկլոֆենակ d11ax18, m01ab05, m02aa15, s01bc03 դոնդող արտաքին կիրառման 50մգ/գ; 50գ ալյումինե պարկուճ | ԴիկլոՖԼԵՔՍ 5% դոնդող | Վետպրոմ ԱԴ, Բուլղարիա | դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) դոնդող 50մգ/գ; 50գ ալյումինե պարկուճ | 8000 |

| Պրինցիպալ | Գործակալ |
|---|---|
| «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ<br>Գործունեության հասցե՝ ք. Երևան, Սիլիկյան թաղամաս, 2-րդ փ. 25/1<br>ՀՎՀՀ՝ 00043772<br>Հ/Հ 1570076313590100<br><br>Տնօրեն՝ Ալեքսանդր Բաղյան<br><br>_______________ | «ՖԹ-Դեղատուն» ՍՊԸ<br>Գործունեության հասցե՝ ք. Երևան, Մարգարյան 6/2<br>ՀՎՀՀ՝ 00210423<br>Հ/Հ 11817074739800<br><br>Տնօրեն՝ Լաուրա Սիմոնյան<br><br>_______________ |

Digitally signed by
ALEKSANDR BAGHYAN 3307750259
Date: 2025.11.11 11:46:50

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ԼԻՑԵՆԶԻԱ

Կ-ԴԳ-000525

ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
ԴԵՂԱՏՈՒՆ (ԴԵՂԵՐ ՉՊԱՏՐԱՍՏՈՂ)

«ՖԹ-ԴԵՂԱՏՈՒՆ» ՍՊԸ
ՀԱՅԱՍՏԱՆ, ԵՐԵՎԱՆ,ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ, ԲԱԲԱՋԱՆՅԱՆ Փ., Շ 71, 53 ԲՆ.

Ք. ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՓՈՂՈՑ 6/2

Լիցենզիան տրված է՝ 26 օգոստոս 2025 Գործողության ժամկետը՝ 26 օգոստոս 2030

ՀՀ առողջապահության նախարարության
աշխատակազմի լիցենզավորման
գործակալության պետ

Վ. Ալեքսանյան

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ TXE2-1D22-6B66-A211
Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):